ձեռնարկութեանը մեծ. տիկին Ակիմեանցը, նպաստելով ոչ միայն կօնցէրտի նիւթական աջողութեանը, այլ և հրաւիրելով արտիստ-երաժիշտներ, որպէս և ամենայն դէպքում աշխատելով պակասացնելով կօնցէրտի ծախսերը: Նոյնպէս յիշելու է մեծ. տիկին Ակիմեանցի քոյր՝ տիկին Էփիլերը, որ ջերմ համակրանք ցոյց տուեց այս գործին, մինչև անձամբ մասնակցելով երաժշտական երեկոյին և հիանալի կերպով երգելով Գունոի «au printemps» ռօմանսը որպէս և մի քանի այլ իտալական երգեր:

Բացի այս երկու հայուհիներից՝ յիշելու է ռուս իշխանուհի Դուլօվան, որ կարելի է ասել կօնցէրտի հերոսուհին էր (պիանիստկա): Նա շատ գեղեցիկ կատարեց Շօպէնի As-dur բալլադան և Մէնդէլսօնի D-moll տրիօն (պիանօ, ջութակ և վիօլօնչէլ). բայց հիանալի էր Հիւգընօտներ օպէրայից ֆանտազիան—այդ դժուարին գործը, որտեղ նա ցոյց տուեց մի զարմանալի ճարպիկութիւն և վարժութիւն իր ձեռքերի ու մատների, խորին երաժշտական հմտութիւն և կիրթ ճաշակ:—Մենք հայերս շատ շնորհակալ պիտի լինենք մեծ. իշխանուհուց, որպէս և երգչուհի օրիօրդ Ցվէտկօվայից և միւս երաժիշտներից, որոնք՝ իբրև օտարազգիք համակրեցին յօգուտ սովատանջ վանեցոց տուած երեկոյին և ոչինչ չը խնայեցին իրանց կողմից որքան կարելի է վայելուչ, գեղեցիկ և փառաւոր դուրս բերել կօնցէրտը—առանց որ և է նիւթական վարձատրութեան կամ պարգևի: Անկարելի է մոռանալ պ. Բաուէրին, որ մեծ բաւականութիւն պատճառեց հասարակութեան իր հիանալի ցիտրայով:

Լ. ճեմարանի աշակերտները երկու անգամ երգեցին «Հայեր եկայք միանանք» երգը և կօնցէրտի վերջում «Боже Царя храни»—պ. Ստեփանեանցի առաջնորդութեամբ:

Կօնցէրտին մասնակցող երեք տիկնայքն էլ ըստացան մի մի փառաւոր փունջ՝ իբրև ընծայ մի պատուելի ընտանիքից:

Հանդիսականների թիւը սաստիկ շատ էր. մի դատարկ աթոռ չը կար մեծ դահլիճում. բոլորեքեան՝ առանց բացառութեան, մնացին մինչև կօնցէրտի վերջը:

Վերջացնելով մեր խօսքը և կրկին անգամ շնորհակալութիւն յայտնելով թէ կօնցէրտին մասնակցողներին և թէ այդ կօնցէրտի կայանալուն նպաստողներին, կարող չենք շնորհակալութիւն չը յայտնել և Լ. ճեմարանի մեծ. պ. պ. վերատեսչին և տեսչին, որոնք ուրախութեամբ ընդունեցին հայ հասարակութիւնը իրանց դահլիճներում և ոչինչ նիւթական ծախսեր չը խնայեցին որքան կարելի է շքեղ, փառաւոր և բարեզարդ անել երաժշտական երեկոն:

Կօնցէրտի եկամուտը մօտաւորապէս 1100 րուբլ էր. իսկ զուտ օգուտը 800-ից աւելի պէտք է լինի:

Բացի սրանից այստեղի հանգանակութիւնը յօգուտ վանեցոց դեռ շարունակվում է. հաւաքվել է մինչև այսօր 7000-ից աւելի. 6000-ը արդէն ուղարկված է ուր հարկն է:

Այս օրերս կուղարկեմ ձեզ մօտ 100 ր. որ ժողովել ենք յօգուտ սովատանջների հայ ուսանողների մէջ:

Բ.

ՆԱՄԱԿ ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ

—

Մարտի 27-ին

Այստեղի երիտասարդներից և տիկիններից ոմանք չը կարողացան անտարբեր գտնվել դէպի ազգայնութեան սուրբ պարտքը՝ և ժողովեցին այս չնչին գումարը՝ որը պէտք է ընդունեն մեր վանեցի եղբայրները և քոյրերը ոչ որպէս օժանդակութեան միջոց, այլ որպէս համակրութեան նշան: Սրանք են նուիրատուները. Գ. պ. Մելիք-Շահնազարեանց, Մելքեանց, Բարախանեանց իւրաքանչիւրը 5-ական րուբլի, պ. Տէր-Ստեփանեանց, տիկին Սուքիասեանց, պ. Գրիգորեանց, պ. Սարուխանբէգեանց, պ. Ագամեանց, պ. Օրդուխանեանց, պ. Ս. Մանուէլ-Ղարախանեանց, պ. Մելիք-Մուրադեանց, իւրաքանչիւրը 3-ական րուբլի: Տէր-Մկրտիչ Շխմանմուտցի, պ. Բարասեանց, Տէր-Ագամեանց, Օրբէլի, Ագամիրզեանց, Համբարձումեանց, Թունեանց, Դաւիթբէգեանց, Արզարեանց, իւրաքանչիւրը 2-ական րուբլի: Տիկին Ռաֆայէլեանց, տիկ. Տէր-Մկրտչեանց, պ. պ. Դոլվաթեանց, Մելիք-Պետրոսեանց, Առաքելեանց, Մասումեանց, Տէր-Պօղոսեանց, Տէր-Գասպարեանց, Բաղչեանց, Խաչատուրեանց, Վարդապետեանց, Աւէտիքեանց, Մանուկեանց, Տէր-Մկրտչեանց, Օհանեանց, Տէր-Նասյեանց, Յովհաննիսեանց, Չրանգիւլեանց իւրաքանչիւրը 1 րուբլի. Ս. Չրանգիւլեանցը վճարեց փոստայի ծախքը: Ընդամենը 75 րուբլի: Որը ուղարկելով խմբագրութեանդ, խնդրում ենք հասուցանել ուր հարկն է:

Ա.

ՆԱՄԱԿ ԻԳԴԻՐԻՑ

—

17-ին մարտի

Տեղիս հասարակութիւնը զգալով վանայ սովատանջների այժմեան սարսափելի դրութիւնը, որոնք օրեկան պարենի համար տանջվում են, ուստի հաւաքվեցաւ. հետևեալ յականէ յանուանէ գրված անձերից 'ի նպաստ նոյն սովելոցն 153 րուբլ 15 կոպ., որք են. Սարգիս Ա. քահանայ Մանուկեանց 10 ր., Աղախան Կանայեանց 50 ր., Սամուէլ քահանայ Սողոմոնեանց 10 ր., Մարտիրոս Միրզօյեանց 2 ր., Յարութիւն Ղարիբեանց 2 ր., Պետրոս Հայրապետեան 4 ր., Նազար Պետրոսեան 1 ր., Յովհաննէս Յարութիւնեան 1 ր., Յովհաննէս Կանայեանց 1 ր., Սարգիս Մ. Նազարեանց 1 ր., Սահակ Ասօյեանց 40 կ., Գասպար Արզումանեանց 1 ր., Թաթոս Աւագեանց 1 ր., Պօղոս Բարսեղեան 2 ր., Շերմազան Տէր-Մինասեան 40 կ., Մկրտիչ Սարգսեան 1 ր., Մինաս Մ. Ալավերդեանց 3 ր., Յարութիւն Տէր-Յարութինեանց 1 ր., Աղէքսան Մինասեան 1 ր., Բաղդասար Մ. Յովհաննէսեան 1 ր., Յակովբ Մ. Նիսանեան 1 ր., Ոսկան Մուրադեան 60 կ., Մկրտիչ Թարօյեան 25 կ., Յակովբ Զօրանեանց 2 ր., Խաչատուր Յովհաննէսեանց 2 ր., Նաւօ Վարդանեան 50 կ., Աղէքսանդր Ատարբէկեանց 1 ր., Մովսէս Տէր-Աբրահամեանց 1 ր., Նիկողայոս Վարդիկեանց 1 ր., Մովսէս Աւետիսեանց 1 ր., Գրիգոր Սարգսեան 2 ր., Ղազար Ներսէսեան 4 ր., Կարապետ Յովհաննէսեանց 1 ր., Սարգիս Յովսէփեան 3 ր., Տիրուհի Շաղակաթ Մանուկեան 5 ր., Սահակ Կանայեանց 2 ր., Գասպար Յովհաննէսեան Ղազարեանց 2 ր., Մովսէս բէկ Տէր-Սարգսեանց 10 ր., Բարդուղիմէոս Տէր-Ստեփանոսեանց 3 ր., Մամիկոն Մէլիք-Մնացականեանց 1 ր., Մանուկ Յարութիւննեանց 2 ր., Յակովբ Սարկ. Ջալալեանց 2 ր.: Վիճարկութիւնից 10 ր., և խնդրեմք հասցնել ուր հարկն է:

Աղախան Կանայեանց

ՆԱՄԱԿ ԿԱՂԶՄԱՆԻՑ

—

Մարտի 18-ին

Ձեր «Մշակ» լրագրի համարներ կարդալով Վանայ սովելոց հայ եղբարց վիճակը մեծ ազդեցութիւն ունեցաւ մեզ վրա, վասն որոյ հանգանակելով մեր բնակված քաղաքի օտարական վաճառականներից, կարողացանք հաւաքել յօգուտ սովատանջների հարիւր տասն և հինգ րուբլի (115 ր.) որը և ուղարկում եմ ձեզ:

Նուիրող անձինք Հին-Նախիջևանցիք՝ Զաքար Մ.-Ջանփօլադեանց 10 ր., Յովհաննէս Ջանփօլադեանց 10 ր., Կարապետ Ջանփօլադեանց 5 ր., Աւետիք Ջանփօլադեանց 6 ր., Նիկօլայոս Շահ-Մուրադեանց 5 ր., Եսայի Բ. Ջանփօլադեանց 10 ր., Ջալալ-Օղլեցիք՝ Ներսէս և Սահակ Դունիամալեանք 20 ր., Մացակ Գ. Սհակով 10 ր., Աղէքսանդրօպօլցիք՝ Վաղարշակ Բալասանեանց 5 ր., Գէորգ Բաբայեանց 2 ր., Արշակ Բէգլարեանց 2 ր., Ազուլիսցի՝ Մէլքօն Մկրտումով 3 ր., Ղարսցիք Աղէքսանդր Մադդալչեան 5 ր., Աղանիկ Նահապետեան 3 ր., Աղախան Տէր-Պօղոսեան 1 ր., Բիթլիզցիք՝ Մէլիք Տէր-Յովհաննէսով 10 ր., Յովսէփ Դանիլով 3 ր., Խօչիկ Մ. Յակովբեան 1 ր., Պետրոս Խէնտէրեան 1 ր., ՈՄ 1 ր., Զաքար Հայրապետով 1 ր., Վարոս Մ. Վարդանով 1 ր., Ընդամէն գումարը եղաւ հարիւր տասը և հինգ րուբլի (115 ր.):

Եսայի Բ. Ջանփօլադեանց

ՆԱՄԱԿ ՎԼԱԴԻԿԱՎԿԱՍԻՑ

—

29 մարտի

Առաջին նամակիս հետ ուղարկելով ձեզ 401 ր. յօգուտ վանայ գաւառի սովելոց, 'ի միջի այլոց խոստացել էի մեր երկու քահանայից դիտաւորութիւնը. Նուիրատուութիւնը շարունակելու դիտաւորութիւնը, բայց չը գիտեմ խմբագրութիւնդ ինչ պատճառով այդ պարբերութիւնը բաց էր թողել: Մենք չը փոխվեցանք և մեր խօստումն իրագործեցինք: Ամեն կիրակի եկեղեցու բեմից հերթով ատենաբանելով յորդորում ենք մեր բարեպաշտօն ժողովրդոց, առատաձեռնութեամբ ձգել իրանց լումայն, ազգային գանձանակի մէջ. Գոյացած գումարն հասցնելով 100 ր. երէկ հեռագրով փոխադրեցինք Թիֆլիս, խնդրելով պ. Ջիթախեանցին այդ գումարը հասցնել ձեր խմբագրութիւնը, որը յուսով ենք ստացած կը լինէք և տնօրինած Վասպուրականի թշուառ հայերին հասցնելու. վասնորոյ խնդրեմ այս համառօտ նամակիս հետ հրատարակէք նուիրատուաց հետևեալ անուններն 'ի խրախոյս այլոց:

Սարգիս Մարկոսեան Կիրակոսեանց 25 ր., կին սորա տիկին Նունիա 5 ր., Մայր սորա Նազանի 5 ր., Անդրէաս Ջաշիտեանց 1 ր., Բագարատ Վախտանգեանց (երկրորդ անգամ) 3 ր., Նազարէթ Վեքիլեանց 5 ր., Գրիգոր Բաղդասարեանց 3 ր., Գրիգոր Վարդանեանց 2 ր., Բաղդան Փիրալեանց 2 ր., Աստուածատուր Սուխիեանց 1 ր., Севановъ 1 р., Աղէք Միրզօյեանց 1 ր., Գէորգ Պետրոսեանց (կրկին) 5 ր., Յակովբ Մկրտչեանց 1 ր., Գէորգ Սումխիեանց 1 ր., Տիկին Նատալիա Ջալինեանց 3 ր., Տ. Վաս. Շաղիեանց 2 ր., Տ. Մարթայ Եղիկեանց 8 ր., Տ. Կատարինէ Բաղդասարեանց 5 ր., հինգ որդիք սորա 5 ր., Տ. Մարգարիտ Յովակիմեանց 1 ր., Հայուհի ոմն 1 ր., Տ. Եղիսաբէթ Խումարեանց 1 ր., Տ. Յուլիանէ Խումարեանց 1 ր., Տ. Մարիամ Խիթարեանց 2 ր., Այրի Մարիամ Թովլաթեանց 1 ր., Տ. Աննա Պանպալեանց 2 ր., Այրի Ուստինէ Սերեբրակեանց 1 ր., Այրի Սոփիա Մայրն Մարուֆովի 3 ր. (յոյն): Յարութիւն և Ստեփաննոս (երկուորեակք) Եղիկեանց 1 ր., Գէորգ Քասեանց 1 ր., Տ. Աննա Միրզարէջեանց 2 ր.: Ընդամենը 101 ր. հեռագրի 50 կոպէկ հանելով, մնում է ինձ մօտ 50 կոպէկ: Ստորագրութիւնը կը շարունակվի մինչև Զատիկ:

Մինաս Ք. Միրանեանց

ՆԱՄԱԿ ԱՂԴԱՇԻՑ

—

23 մարտի

Այսօր բարոյապէս և ֆիզաքապէս յոգնած հասանք Աղդաշ, որ գտնվում է Գանձակի և Շամախու ճանապարհի վրա: Պաղրած սակրներս անդադար ճանապարհորդելուց յետոյ Աղդաշի իջևանում կարգի բերելու վիճակվեցաւ: Օգուտ քաղելով նորանից, որ փոստի ճանապարհի վրա ենք գտնվում, սկսեցի բարեկամներիցս մէկին նամակ գրել: Մոմը ցուրտ և ծխոտ սենեակումս մի աղօտ լոյս էր գցում նամակիս վրա: Աչքերս մի կողմ դարձրած միտք էի որոնում գրչիս նիւթ, յանկարծ «Կավկազ» լրագրի թերթը աչքովս ընկաւ, ագահութեամբ էր, թէ ուրախութեամբ վերցրի, դա մարտի 16-ի կիրակէի 74 № էր: Լրագրի էջերի վրա ընդհանուր ակնարկութիւն գցելով, աչքովս ընկաւ «Մշակի» խօսքը: Այդ բաւական էր որ այլ ևս աչքս չը դարձնէի այդ չարքերից: Կարդացի հետևեալը՝ «Մշակի» առաջնորդող յօդուածի մէջ մարտի 15-ին կարդում ենք հետևեալը՝ «Մեզ հաղորդեցին տպելու համար հետևեալ տխուր հեռագիրը, որ ուղարկել է Վանի ռուսաց հիւպատոս պ. Կամսարականը. սովը մեծ ուժով տարածվում է. Աղբակումը մինչև 150 մարդ սովամահ են եղել. հարիւրաւոր գիւղացի աղջիկներ, մերկ և սոված վերթափած են գիւղի փողոցներում: Վանի մէջ կայ 200—300 երեխայ սովից հիւանդացած. Խրիմեան Հայրիկը ձեռք է տալիս հիւանդանոց հիմնելու: Օգնեցէք այդ մարդասիրական ձեռնարկութեանը: Եթէ գործ չը դրվին ամենաանհրաժեշտ միջոցներ, Վասպուրականը կորած կարելի է համարել: Մեծ գումարներ միայն կարող են հեռացնել նորա վերջնական կորուստը»:

Վերև բարոյապէս յոգնելուս վրա խօսեցի, մի երկու խօսքով պարզեմ խօսքս, այն բժիշկների մէջ, որոնք նշանակված են քննելու Բաքուի նահանգի առողջապահական դրութիւնը, ինձ և միայն իմ ընկերոջը վիճակվեցաւ երեք հայի գիւղ Բաքուի սահմանումը Գանձակի նահանգի մէջ:

Միւս բժիշկների քննելու, հետազօտելու առարկան կազմում է թուրք տարրը: Այս երեք գիւղը հետազօտելով, գտանք այն ինչ որ ամենադժուարին է մարդկութեան համար՝ հացի կարօտութիւն է. բայց չը կորցրած երկու երեք օր ճանապարհ գնացինք այս հաղորդելու ուր հարկն էր և տնտեսղից առնելով այն, ինչ հարկն է մարդու համար, դարձանք նոյն ճանապարհով, որը փօստով, որը չարվադարի ձիաներով և ահա մենք կէս ճանապարհի վրա ենք այսօր—գնում ենք դէպի այն գիւղերը, ուր ժողովուրդը գիտէք թէ ինչ սրտով է մեզ սպասում:

Բայց դառնանք մեր «Մշակի» բօթաբեր հեռագրին: Այն աշխարհը, որի մէջ սկսեց խաղալ և հրճուել դարերով քնած Հայաստանի յուսոյ բլբուլը, այն աշխարհը—Վասպուրական աշխարհը, որի հսկայական կրծքի վրա թուխպ մթնոլորդում երևեց Գաբրիէլ հրեշտակապետը հրեղէն սուրը աջ ձեռքին դէպի թշուառ հսկայի սիրտը ուղղած և թշուառութեան հրոյ խուրձը ձախ ձեռքին, անխնայ փչող հողմի զօրութեամբ այս կողմն այն կողմը ցանելով—այրեց, կործանեց, տակն ու վրա արեց, հողի հետ հաւասարեց և կոտորեց, ընկեց ահ ու սարսափի մէջ գցելով ծվող, ծչող երեխաներին և կանանց մազերը խճճած, աչքերը չռած, մարմինները մերկացրած, որին լեռները, որին օտար երկիր, որին դժոխքը քշեց, խորտակեց, Վասպուրականը որ դեռ ոչ մի անգամ ազատ չը շնչած, սովի անգութ ճիրաններին մէջն ընկաւ և այսօր արիւնաթափ, ուժաթափ մաղէ կամուրջի վրա կանգնած ամեն բան լափող գազանի դէմն է կանգնած. Վասպուրական աշխարհին մահն է սպառնում:

Վասպուրական աշխարհը Հայաստանի կենտրոնից, նորա վեհ և վիրաւորեալ կրծքից—գերեզմանական մահասպառ ձայնով, մերթ մեղմ, մերթ անսելի գոչելով ձեզ է ասում Հայաստանի զաւակունք՝ անգութ հայեր, իմ սիրելի զաւակունքս, անսիրտ հայեր, իմ խանդակաթ որդիքս, իմ գզվելի, ժանկաղէմ, իմ թշուառ, իմ մոլորեալ ժառանգներս: Որդիքս էք դուք իմ կաթով սնուցած, թէ գազան էք դուք իմ արիւնս ծծող:

Եկէք զաւակունքս, հասէք, հեռագրով եմ կոչում ձեզ, եկէք, գուցէ ձեր մօրը վրա հասնէք, գուցէ նորա մահուան անկողնի մէջ նորա ըպառված վերջին արտասուաց կաթիլները սրբէք, գուցէ նորա վերջին կտակը լսէք: Եթէ ոչ այլ ես ոչ ոքի իրաւունք չունենայ իմ յիշատակս սևացնել իրան հայ կոչելով, ոչ ոք չը համարձակի վրդովել իմ գերեզմանական խաղաղը ագռաւի կամ բուի ձայնով «Աշխարհամենայն» երգել:

Բայց ո՞ւր են ուր Վասպուրականի վէրքերը դարմանողները, ո՞ւր են նորա հարազատ զաւակները: Մեր Հայրիկը, մեր սուրբ Հայրիկը, Վասպուրականի մեղմ Արծուիկը, որի վեհ սիրտը տասնեակ տարիներէ ի վեր բաբախում է այն սև աշխարհի կրակված արիւնով, որը երկաթեայ իր չանգերը կամենում էր դաժան ոգւոյ սիրտը մտցնել և իր հայրական թևերը տարածած իր թշուառ զաւակացը հովանի լինել, այսօր (լեզուս պապանձվի) թուլացած դժոխային աղէտալի դրութեանց տակ չոքում է և մեծ և անտանելի ծանրութիւն նորա վրա ընկած նորա արծուական թևերը կոտրատելու, խորտակելու վրա է: Սիրտ տուէք, սիրելի հայեր, օգնութիւն հասէք. հասէք Արծուին օգնութիւն:

Ամեն մի հայ մի փոքրիկ, ակլոր արարածի, սև աչքերի, թուխ ցրված մազերի, որ այս կողմն այն կողմն ընկած, գոռում գոչում է, աչքերը չռած, թալկանում է, վեր ընկնում և մի քանի ժամ տնքալով հոգի արձակում, ամեն մի հայ մէկի ձեռքից բռնած թող դուրս քաշի ազատի այդ թշուառ արարածին այդ արեան ծովից, մահվան գերեզմանից—Վասպուրական աշխարհից: Ամեն մէկը այդ փոքրիկներից ձեր սիրտն է, ձեր արիւնն է, ձեր յոյսն է հայեր, ինչու էք քնում, ինչու էք մեռնում:

Ինձ յանձնած այս նուիրական գործը աւարտելուց յետոյ որ սկսել է մեր ողորմած տէրութիւնը, մեր վեհափառ Կովկասու փոխարքան—ես ինձ նուիրում եմ Հայրիկի յուսադրեալ հիւանդանոցին, եթէ միայն հանգամանքները յաջող են, եթէ միայն նիւթերը չը պակասին գործ տանելու, որպէսզի, հակառակ դէպքում, իմ ներկայութեամբ սովեալների անթիւ թւի վրա մի սովեալ ևս չաւելցնեմ: Որ ունիցի ականջս լսելոյ լուիցէ և որ հաւատս ունիցի հաւատալոյ հաւատասցէ:

Բժիշկ Բ. Նաւասարդեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Վ. ԱԳՈՒԼԻՍԻՑ հաղորդում են, թէ դպրոցների այժմեան հոգաբարձութիւնը բաւական թոյլ կերպով է վերաբերվում իր յանձն առած պաշտօնին: Հոգաբարձուներից մէկը պ. Յ. Շ. երկու ամսից աւել է, որ հրաժարական է տուած, բայց կանդիդատին չեն հրաւիրում նորա տեղը: Ուգարարձութիւնը, չը նայելով, որ ահա մօտ մի տարի է, որ ընտրված է, բայց տակաւին դպրոցների տնտեսական մասը կամ հաշիւները չէ ընդունել իր ձեռքը. ինչ որ վերաբերում է ուսումնական մասին, նրանք սպասում են մինչև տարւայ վերջը, որ քննութիւնների ժամանակ տեսնեն, թէ որքան յառաջադիմութիւն կամ յետադիմութիւն են արել դպրոցները. բայց նախապէս չեն նկատում ուսուցչի կամ վարժապետների գործունէութեան վրա։

Մեզ գրում են Վ. ԱԳՈՒԼԻՍԻՑ, թէ անցեալ տարի մեր դպրոցները երկրորդ և երրորդ դասատուններ ունէին, բայց դարձեալ ծախքերը այնպէս էին կարգադրված, որ դպրոցների եկամուտը ծածկում էր բոլոր ծախքերը. իսկ այս տարի, չը նայելով, որ երկրորդ և երրորդ դասատուները փակվեցան, այսու ամենայնիւ, ծախքերը այնքան բազմացրին, որ դպրոցները տարւայ վերջը նիւթական կողմից բաւական վնաս պիտի կրեն։ Նամակագիրը պ. պ. երեսփոխանների ուշադրութիւնն է դարձնում այդ անկարգութեան վրա, որ վտանգ է սպառնում դպրոցների հիմնական դրամագլխի գոյութեանը։

Վ. ԱԳՈՒԼԻՍԻՑ գրում են, որ դպրոցների աշակերտների և աշակերտուհիների թօշակները աւելացնելու պատճառով, աղքատ ծնողներից շատերը դուրս տարան իրանց զաւակներին և այսպէսով դպրոցների եկամուտից աւելի քան 500 րուբլի պակսեց, և բացի դրանից, աղքատների որդիները զրկվեցան ուսումից, որ շատ ցաւալի է. Հարուստները իրանց որդիները ամեն քաղաք ուղարկելու և ուսում տալու կարողութիւն ունեն։

Ստացանք յօգուտ Վանի սովատանջների ԹԻՖԼԻՍՈՒՄ բնակվող հետևեալ անձինքներից հետևեալ նուէրները. Գրիգոր Տէր-Գէորգեանցից 1 ր., Ամիրջան Մահտեսի Աւանօվից 40 կ., Մկրտիչ Տէր-Սարգսեանցից 1 ր., ընդամենը 2 ր. 40 կ.

Մեզ գրում են Կ. Պօլսից որ մարտ ամիսը անցնելով և ապրիլը մտնելով սովը երեւի աւելի էլ պէտք է տարածվի և սաստկանայ Թիւրքաց Հայաստանում. Այժմ ամբողջ Հայաստանը և Փոքր-Ասիան զոհ է սարսափելի սովի. Սովատանջ ժողովրդի շղթան սկսվելով Բայազէդից, Վանից և Ալաշկերտից և անցնելով Էրզրումի մօտով, տարածվում է մինչև Բաղդադ, հասնելով մինչև ծովի եզերքը. Ահա այն գլխաւոր տեղերի անունները, որոնք գտնվում են սովի ճանապարհի վրա՝ Կարին, Բասէն, Բայազէտ, Ալաշկերտ, Մուշ, Վան, Բիթլիս, Տիգրանակերտ, Սղերդ, Մօսուլ, Քէրքուք, Մէրդին, Բաղդադ, Պիլէճիք, Էսկիշէհիր, Պրուսա, Նաչօվա, Նիկոմիդիա. Մի խօսքով ամբողջ Հայաստանը և ամբողջ Փոքր-Ասիան հառաչում է սովի անգութ հարուածի տակ.

Ստացանք յօգուտ Վանի սովատանջների 17 րուբլ գերմանական Ստրասբուրգ քաղաքից, որ նուիրատուութեամբ հաւաքել իր գերմանացի բարեկամներից հայ ուսանող Աւետիս Արասխանեանց. Նամակը կը տպենք.

ՕԴԷՍԱՅԻՑ ստացանք պ. Բ. Շէխեանցից 14 ր. յօգուտ Վանի սովատանջների. Նուիրատու անձինք սրանք են. Կօզան (հրէայ) 1 ր., Աղէքսանդր Եղիազարեանց 5 ր., Սիմէօն Բախշինեանց 5 ր., Կարապետ Խաչատուրով 3 ր.. Ընդամենը 14 րուբլի.

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԻԱ

«Голосъ» լրագրի մէջ տպված է հետևեալ առաջնորդող յօդուածը:

Իշխ. Բիսմարկի հրաժարականի պատմութիւնը երեւի այնպէս կը վերջանայ, ինչպէս վերջացել են միշտ այդպիսի դէպքերը գերմանական պետական կանցլերի գործունէութեան ընթացքում: Վիլհելմ կայսրը հրաժարվեց ազատել իշխան Բիսմարկին այն պարտականութիւններից, որոնք նրա վրա դրված են և բարձրագոյն հրաման հրատարակեց, որով իրաւունք տուեց կանցլերին դիմել առաջ իրան, կայսրին, իսկ յետոյ Միացեալ Խորհուրդին և առաջարկել կայսերական սահմանադրութեան 16 և 17-դ յօդուածների փոփոխութիւնը: Այդ յօդուածները որոշում են Գերմանական Կայսրութիւնը կազմող պետութիւնների ձայների քանակութիւնը Միացեալ Խորհուրդի մէջ:

Գերմանական կանցլերը ապահոված է, որ կայսրը կը տայ իր համաձայնութիւնը այդ փոփոխութեան համար: Այդ իրողութիւնը երեւում է կայսրի հրամանից, որի մէջ ասված է «առաջարկել առաջ ինձ և յետոյ Միացեալ Խորհուրդին»։ Այդ խօսքերը կայսրը չէր ասի, եթէ առաջուց չը փնէր համաձայնել իշխան Բիսմարկի առաջարկած փոփոխութիւնների հետ: Մնում է Միացեալ Խորհուրդի համաձայնութիւնը, որ գերմանական սահմանադրութեան համեմատ անհրաժեշտ է:

Դժուար է ենթադրել, որ Միացեալ Խորհուրդը մերժի տալ իր համաձայնութիւնը: Իշխան Բիսմարկ Խորհուրդի մէջ արդէն 28 ձայներ իր կողմը ունի և կարող է մի երկու կամ երեք ձայներ էլ իր կողմը քաշել: Մտադրված գործի համար այդ ձայները անհրաժեշտ են և երբ իշխանը ձեռք կը բերի դրանց, նա կարող է համարձակ փոփոխել սահմանադրութեան այն յօդուածները, որոնց իր համար անյարմար է համարում:

Ինչպէս երեւում է իշխան Բիսմարկ այդ նպատակին հասնելու համար սկսեց իր հրաժարականի պատմութիւնը: Մենք չենք զարմանայ, եթէ վերջը տեղեկանանք, որ Միացեալ Խորհուրդի մէջ Բիսմարկի աշխատանքներով կազմվեցաւ նրան թշնամի մեծամասնութիւնը, որպէս զի իշխանը կարողանար գերմանական սահմանադրութեան 16 և 17-դ յօդուածների փոփոխելու խնդիրը բարձրացնել:

Ակներև է, որ իշխան Բիսմարկի համար այդ յօդուածների փոփոխութիւնը մեծ նշանակութիւն ունի: Յայտնի է, որ իշխանը մտադիր է ուղղել գերմանական ֆինանսների վատ դրութիւնը ծխախոտի մենավաճառութիւնը հաստատելով: Եթէ նա կը կարողանա իրագործել այդ մտադրութիւնը, գերմանական բիւջեթի պակասորդները աւելորդների կը փոխվին և այդպիսով իշխանը միջոցներ կունենայ իրագործել իր նպատակները: Ի հարկէ ծխախոտի մենավաճառութեան հարցի վճռելը վերջ ի վերջոյ կախված է կայսերական պարլամենտից, բայց Բիսմարկ պարլամենտի մէջ շատ անգամ պատերազմել է իր առաջարկած օրէնքների հակառակորդների հետ և այդ պատերազմները միշտ վերջացել են իշխանի յաղթութիւններով:

Ուրիշ բան է Միացեալ Խորհուրդը: Առանց նրա համաձայնութեան չէ կարելի կառավարութեան կողմից պարլամենտին որ և է նախագիծ առաջարկել և բացի այդ Խորհուրդի մէջ կարող է կազմվել այնպիսի մեծամասնութիւն, որ կը ցանկանայ իշխանի հեռանալը կառավարութենից:

Եթէ սահմանադրութեան 16 և 17-դ յօդուածները Բիսմարկի ցանկութեան համեմատ փոփոխվեն, Միացեալ Խորհուրդը կը կորցնի իր այժմեան նշանակութիւնը: Այդ դէպքում միայն երեք պետութիւններ (Պրուսիա, Սաքսոնիա և Բավարիա) Խորհուրդի մէջ ձայների մեծամասնութիւն կունենան, իսկ այդ պետութիւնների ներկայացուցիչները գործում են իշխանի ցանկութեան համեմատ: Այդպիսով ոչ ոք չի կարողանայ վերահսկել Բիսմարկի գործողութիւնների վրա և նա ամեն բան կը կարողանայ անել:

«GRAPIC» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԸ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

Բառացի քաղուած ենք անում անգլիերէն «Grapic» շաբաթաթերթի սոյն ապրիլի 10 հրատարակած համարից:

«Contemporary» լրագիրը յայտնի է իր վաւեսեմ ուղղութեամբը, և արդարև միայն նա է ուրիշ շատ ամսատետրների թւում, որ այս ամիս հրատարակվելիս ընտրողութեանց մասին կողմնապահութեան խօսք չասաց: Նա բերում է մի յօդուած the Armenian question «Հայոց խնդիր» վերնագրով և ստորագրված an Eastern statesman մի արևելցի դիւանագէտ. այդ յօդուածը հրատարակվում է խիստ յարմար ժամանակին: Անցեալ շաբաթ էր որ մենք յիշեցինք մի շատ երևելի հեղինակութիւն Armenians, Koords and Turks, հայերը, քուրդերը և թուրքերը James Creaghe գնդապետի ձիրալիր գրչից բղխած, և հիմա մենք շատ ուրախ ենք որ մի այդպիսի բարձր և ձեռներէց հեղինակը ինչպէս է «մի արևելցի դիւանագէտը», որը մեր աներկբայ համոզման համեմատ, մի ուրիշը չէ, բայց եթէ պարսից դեսպան և ինքը մի հայ Մելքոմ-խանը, հաստատում է մեծարոյ գնդապետի գաղափարները: «Հայոց խնդիրը» այնպէս սերտ կապուած է այն մեծ արևելեան խնդրի հետ, որ հէնց հիմա պահանջում է իր լուծումը, որ մենք պարտք ենք համարում մեզ համար այս յօդուածը յանձնարարել նրանց ուշադրութեանը, որոնք փափաք և պարապականութիւն ունեն հիմնաւորապէս ծանօթանալու այն ամենակարևոր նիւթի հետ որ շուտով ամեն միւս խնդիրները ետ պիտի մղէ: Վերջի շաբաթները լիքն էին մեր թերթերը այն հարստահարութեանց պատմութիւններովը, որոնց ենթարկված են հայերը քրդերի կողմանէ, այն սովի լուրը որ հիմա տիրում է այն երկրում լորդ-Մէյրի նախագահութեան ներքոյ մի յանձնաժողովի կազմելուն առիթ եղաւ, որ նրանց նեղութիւնը թեթևացնեն. բայց Անգլիան է դարձեալ և ոչ թէ Տաճկաստանը, որ շարժում է այն խեղճերի կրած անիրաւութիւնքը ամոքելու: Արևելցի դիւանագէտը յառաջ է բերում Բեռլինի դաշնադրութեան 61-դ յօդուածը, որ ապացուցանէ թէ մէկ փորձ չէ եղած ամենահին քրիստոնեայ ազգի (Հայոց) շահերի պաշտպանութեան համար: Մենք հաւատալի ենք որ մեր բազմահմուտ կառավարութիւնը յարմար կը գտնէ ստիպել Տաճկաստանին որ կատարէ իր առատ առատ տուած խոստումները երբոր Ռուսաստանը թակում էր նրա Կ. Պօլսի դռները:»

ՖՐԱՆՍԻԱ

«Голосъ» լրագրի մէջ տպված է հետևեալ թղթակցութիւնը Փարիզից:

Արգելված միաբանութիւններին վերջին ժամանակներում կառավարութենից տուած հարուածները նրանց չը վախեցրին: Նոքա մտադիր են օրինաւոր բոլոր ուժերով ընդդիմանալ կառավարութեան այն խիստ հրամաններին, որոնք արգելում են նրանց գոյութիւնը առաջվայ պայմաններով: Որպէս զի պատերազմը աւելի աջող հետևանքներ ունենայ, բոլոր միաբանութիւնները վճռեցին բաժանել եպիսկոպոսների վիճակը, այսինքն արգելված միւս միաբանութիւնները վճռեցին չը հնազանդվել ֆրանսիական կառավարութեան հրամաններին և իրանց գոյութեան համար թոյլտուութիւն չը խնդրել: Այսպիսով կառավարութիւնը ստիպված կը լինի փակել նրանց և հետևապէս անբաւականութիւնների թիւը էլ կը շատացնէ:

Եթէ միաբանութիւնները մինչև վերջը հետևեն իրանց այդ վճռին, նոքա կարող են մասամբ դժուարացնել կառավարութեան դրութիւնը: Բանը նրանում է, որ եթէ մինիստրութիւնը կամենայ խիստ ծայրայեղութեան հասցնել և փակէ արգելված միաբանութիւնների բոլոր հիմնարկութիւնները, այդ դէպքում մօտ 200.0 ուսանողներ պարապ կը մնան: Պետական գիմնազիաները առանց այդ էլ լի են և այդքան աւելորդ աշակերտներին չեն կարող ընդունել:

Բայց հազիւ թէ գործը այդ ծայրայեղութեանը հասնի: Մի քանի միաբանութիւններ այնքան չեն սիրում եպիսկոպոսներին, որ համաձայն են բաժանել նրանց վիճակը: Այս վերջիններին աւելի էլ դրդում է բաժանել եպիսկոպոսների վիճակը մի քանի պատգամաւորներից և սենատորներից կազմած մասնաժողովը, որ ամեն միջոցներ գործ է դնում մինիստրութեան կարգադրութիւններին ընդդիմանալու համար: Այդ մասնաժողովը առաջնորդում է միաբանութիւնների ընդդիմադրութեանը, իրաւաբանական խորհրդածութիւններ է հրատարակում, միաբանութիւններին փաստաբաններ է տալիս և այլն:

Արդէն հիմա միաբանութիւնների մէջ սկսում է աւելի խաղաղասիրական ոգի տիրել: Շատերը պնդում են, որ գոնէ կանանց միաբանութիւնները հնազանդվեն կառավարութեան պահանջներին և թոյլտուութիւն խնդրեն իրանց գոյութեան համար:

Միաբանութիւնների ընդունած վճռի մէջ եպիսկոպոսներին վիճակակից լինելու մասին հետաքրքիր է այն, որ դա թոյլ է տալիս դատողութիւններ տալ Հռոմի մէջ տիրապետող տրամադրութեան մասին: Ակներև է, որ, եթէ պապը ցանկանար գիջումներ անել, նա իսկոյն կը հրամայէր միաբանութիւններին, որ նրանք կատարեն կառավարութեան պահանջները:

Հռոմից ստացված լուրերից երևում է, որ պապը բոլորովին չէ ծածկում իր անբաւականութիւնը Ֆրէյսինէի մինիստրութեան կարգադրութիւնների դէմ: Երբ ֆրանսիական Նոր դեսպանը Հռոմի մէջ ողջունեց պապին, սա յայտնեց իր ցաւակցութիւնը այն միջոցների առիթով, որոնց ֆրանսիական կառավարութիւնը այժմ դիմել է:

Անգլիական ազատամիտ կուսակցութեան յաղթութիւնը վերջին ընտրութիւնների ժամանակ չափազանց զարմացրեց ֆրանսիացի քաղաքագէտներին: «Republique Française» լրագիրը, որ սաստիկ ցանկանում էր պահպանողականների յաղթութիւնը, սկզբից չէր կամենում մինչև անգամ հաւատալ, որ Անգլիայում ազատամիտ մինիստրութիւն կազմվէր:

Հանրապետական և միապետական բոլոր ազատ մամուլը ուրախ է, որ անգլիական ազատամիտ կուսակցութիւնը յաղթող հանդիսացաւ: Անգլիայի, Գերմանիայի և Աւստրո-Ունգարիայի մէջ կապվելու դաշնակցութեան երկիւղը բոլորովին անհետացաւ: Անգլիայի և Ռուսաստանի ապագայ սպասվող բարեկամութիւնը, ընդհանուր կարծիքի համեմատ, եւրոպական դաշնակցութեան ձևը և եւրոպական քաղաքականութեան ուղղութիւնը կը փոխէ: Այդ բարեկամութիւնը հաստատելու համար Ֆրանսիան կարող է միջնորդ լինել:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 ապրիլի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 93 7/8 ր., երկրորդ 92 7/8 ր., երրորդ 93 ր. 50 կ., չորրորդ 93 1/8 ր., ներքին 5% առաջին տոմսակը արժէ 226 ր., երկրորդ 919 ր. 25 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 91 ր., երկրորդ 91 ր., երրորդ 90 ր. 75 կ., ոսկի 7 ր. 79 կ.: Ռուսաց 1 րուբլ Լօնդոնի վրա արժէ 2525 պէնս, ռուսաց 100 ր. Գերմանիայի վրա արժէ 127 մարկ 50 պֆ., Համբուրգի վրա 215 մարկ 25 պֆ., Փարիզի վրա 265 ֆր. 50 սանտիմ: Բօրսայի տրամադրութիւնը ամուր է:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 ապրիլի: «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է հետևեալ բիւլետէնը Կայսրուհու առողջութեան մասին. անցեալ շաբաթվայ ընթացքում Կայսրուհու առողջութեան մէջ առանձին փոփոխութիւն չէ նկատված: Շաբաթվայ սկզբում Թագուհուն անհանգիստ էր անում հազը, տենդային դրութիւնը չափաւոր էր: Ախորժակը և քունը բաւականացուցիչ են, ուժերը պահպանվում են:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 ապրիլի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 93 ր. 87 կ., երկրորդ 92 ր. 62 կ., երրորդ 93 ր. 50 կ., չորրորդ 93 ր., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 226 ր. 25 կ., երկրորդ 220 ր. 50 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 90 ր. 75 կ., երկրորդ 91 ր., երրորդ 90 ր. 87 կ., ոսկի 7 ր. 78 կ.: Ռուսաց 1 րուբլ Լօնդոնի վրա արժէ 25,28 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 215 մարկ: Բօրսայի տրամադրութիւնը ամուր է:

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ